



ԵԱՀԿ Երևանի գրասենյակ

Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը  
Օրենսդրական բացթողումների վերլուծություն

Ժողովրդավարության զարգացման ծրագիր

2006 թ. մայիս



Հարգելի գործընկերներ,

Սիրով Ձեզ ենք ներկայացնում թրաֆիքինգի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ առկա բացթողումների վերլուծության արդյունքները:

ԵԱՀԿ-ն թրաֆիքինգը համարում է անվտանգության խնդիր, իսկ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը՝ առաջնահերթություն: Ամեն տարի հարյուր հազարավոր կանայք, տղամարդիկ և երեխաներ զոհ են դառնում են այս զագրելի հանցագործությանը, որը ներգրավում է ավելի ու ավելի տարաբնույթ միջազգային քրեական կազմակերպությունների՝ բարձր եկամտի և համեմատաբար ցածր ռիսկ պարունակելու պատճառով:

Վերջին տարիների ընթացքում շատ պետություններ, այդ թվում նաև Հայաստանը, ակտիվացրել են իրենց ջանքերը թրաֆիքինգի քրեականացման և զոհերի պաշտպանության գործում: Հայաստանում վերջին մի քանի տարիների ընթացքում մենք ականատես ենք եղել օրենսդրության նշանակալի բարելավմանը: Այնուամենայնիվ այս ոլորտում դեռևս հետագա բարելավման զգալի կարիք կա: Այս վերլուծության նպատակն է վերհանել առկա բացթողումները և ներկայացնել հիմնական առաջարկությունները օրենսդրական բարեփոխումներին ուղղված հետագա աշխատանքների համար:

Օրենսդրական բացթողումների վերլուծությունն իրականացվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի՝ թրաֆիքինգի դեմ ուղղված միջոցառումների շրջանակներում: Թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջոցառումները մշտապես գտնվել են ԵԱՀԿ Երևանի գրասենյակի Ժողովրդավարության զարգացման ծրագրի կիզակետում՝ 1999թ. փետրվարին Գրասենյակի հիմնադրումից ի վեր:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակն իր երախտագիտությունն է հայտնում Հյուի Հանդիսայդին՝ սույն վերլուծության գլխավոր հեղինակին, և Մելինե Պետրոսյանին՝ ազգային օրենսդրության հետ ծանոթացումն ապահովելու, հասկացությունները պարզաբանելու, գրավոր և բանավոր թարգմանություններ կատարելու համար: Ծնորհակալություն ենք հայտնում նաև ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) Օրենսդրական աջակցության բաժնին, մասնավորապես՝ Մարթա Ալյուր-Շելենբաումին և Իրինա Ուրումովային՝ այս փաստաթղթի նախորդ տարբերակների վերաբերյալ արժեքավոր դիտարկումներ ներկայացնելու համար:

Հուսով ենք, որ օրենսդրական բացթողումների այս վերլուծությունը օգտակար կլինի Հայաստանում թրաֆիքինգի և քրեական արդարադատության վերաբերյալ օրենսդրության բարեփոխումներին ուղղված հետագա ռազմավարությունների և միջոցառումների ծրագրման հարցում:

Հարգանքներով՝



Դր. Բլանկա Հանչիովա  
Ժողովրդավարության զարգացման ծրագրի ղեկավար

Երևան, մայիս, 2006 թ.



**Համառոտ նկարագիր**

1. ՀՀ իրավական օրենսգրքի համապատասխանեցումը մարդկանց թրաֆիքինգի միջազգային գործիքների հետ շարունակական աշխատանք է: Թեպետ Հայաստանը սկզբունքորեն ընդունել է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային հիմնական կոնվենցիաները, սակայն այդ կոնվենցիաների առանձին դրույթներն ընդունելու ուղղությամբ նրա ընդհանուր օրենսդրական ջանքերը պակաս նպատակային են և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարելու համապարփակ, բազմակողմանի, մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումները, որ ամրագրված են կոնվենցիայով բացակայում են:
2. Մարդկանց թրաֆիքինգի օրենսդրական սահմանումը Հայաստանում ավելի լայն է, քան միջազգային պայմանագրերի սահմանումները, սակայն իր համակողմանիությամբ և գենդերային չեզոքությամբ այն համապատասխանում է իր միջազգային համանուն հասկացություններին (անալոգիաներին):
3. Երեխաների թրաֆիքինգի առումով հայկական սահմանման մոտեցումը հստակ չէ և անհարկի է:
4. Բացի բուն սահմանումից, ՀՀ օրենքով դեռևս հանցակազմ չեն համարվում թրաֆիքինգի լայն դրսևորման կարևոր տարրեր պարունակող մի շարք այնպիսի կից գործընթացներ, ինչպիսիք են թրաֆիքինգի զոհի ծառայություններից գիտակցաբար օգտվելը կամ մարդկանց թրաֆիքինգը հեշտացնելու նպատակով ճանապարհորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի կեղծելը, թաքցնելը կամ պահելը: Նման երևույթների քրեականացումը կարող է հզոր գործիք հանդիսանալ իրավապահ մարմինների ձեռքին, ինչպես նաև մեկ այլ գործիք կարող է հանդիսանալ թրաֆիքինգի գործընթացում ներգրավված կորպորատիվ մարմիններին և այլ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը: Սակայն այս գործիքները դեռևս առկա չեն Հայաստանում: Եթե նման իրավաբանական անձինք պատասխանատվության ենթարկվեն թրաֆիքինգին աջակցելու իրենց գործողությունների համար, ապա քրեական պատասխանատվության առկայության դեպքում նրանք ավելի խստորեն կվերահսկեն իրենց գործողությունները:
5. Հայաստանում թրաֆիքինգի հետ կապված խախտումների համար պատժամիջոցները բավականաչափ խիստ չեն, որպեսզի այդ գործընթացում ներգրավվածները խուսափեն այդ գործով ի սկզբանե զբաղվելուց կամ էլ չվերադառնան նույն գործին նախկին խախտումների համար պատժվելուց հետո: Այդ մեղմության օրինակներից մեկն էլ այն փաստն է, որ թրաֆիքինգի պատժամիջոցներից է հանդիսանում տուգանքը. պատժամիջոց, որ միջազգային պայմանագրերով նախատեսված չէ և, որ մարդկանց թրաֆիքինգով զբաղվողներից շատերը հանգիստ կարող են իրենց թույլ տալ: Նույն կերպով ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում մարդկանց թրաֆիքինգի պատժամիջոցները նշանակալիորեն տարհամոզիչ չեն, նախատեսված նվազագույն պատիժը նրկու տարվա ուղղիչ աշխատանքն է, իսկ առավելագույն պատիժը՝ ութ տարվա բանտարկությունն առանձնապես ծանր հանգամանքների առկայության դեպքում: Այլ երկրներում նման հանգամանքներում մարդկանց թրաֆիքինգի համար սահմանվում է մինչև քսան տարվա կամ նույնիսկ ցմահ բանտարկություն: Քիչ չէ, որ ՀՀ օրենսդրությունը մեղմ է վերաբերվում մեղավոր կողմի

նկատմամբ, այն դեռևս հետապնդում է մարդկանց թրաֆիքինգի զոհերին այն հանցանքների համար, որ կարող են կատարած լինել այդ գործընթացի ընթացքում՝ նույնիսկ այնպիսի իրավիճակներում, որ հաճախ համեմատելի են ճնշման և հարկդրանքի հետ:

6. Թերևս միակ ուղղությունը, որտեղ ՀՀ օրենսդրությունը նվազագույնն է ադապտացվել թրաֆիքինգի իրականությանը, զոհերին տրամադրվող աջակցությունն ու պաշտպանությունն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ներկայիս տարբերակը սահմանափակվում է միայն տուժողների, քրեական դատավարությանը մասնակցող վկաների և նրանց հարազատների պաշտպանությամբ, սակայն պաշտպանությունը չի տարածվում քրեական դատավարությանը մասնակցողների հետ կապ ունեցողների վրա: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու 2005թ. օգոստոսի նախագծով այս հանգամանքին լուծում չի առաջարկվում: Ներկայիս Քրեական դատավարության օրենսգիրքը պահանջում է, որ պաշտոնատար անձինք տուժողների և վկաների սպառնալիքներին նախ և առաջ պատասխանեն պաշտոնական նախագուշացմամբ, մի միջոցառում, որ հազիվ թե վերջ տա նման սպառնալիքներին, սակայն կլսաթարի հենց տուժողների և վկաների անվտանգությունը: 2005թ. օգոստոսի փոփոխությունների նախագծում սա չկա:
7. Դատական գործ հարուցելու կամ մեղադրվող կողմի դեմ ցուցմունք տալու որոշում կայացրած թրաֆիքինգի զոհերին տարբեր ձևերով աջակցելը առանցքային է՝ ապահովելու թրաֆիքինգի գործընթացից արդյունավետորեն և երկար ժամանակով վերականգնվելու հնարավորությունը: ՀՀ օրենսդրությունը չի տրամադրում նման օգնություն, որը պետք է ներառեր ապահով կացարան, բուժօգնություն և նրելսանների կրթություն: Իրականում օգնության մի շարք հիմնական միջոցառումներ, որ առաջարկվում էին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծում՝ հանվել են նախագծի ավելի վերջին տարբերակներում:
8. Վերջապես, այնպիսի անդրազգային հանցանքների համար, ինչպիսին մարդկանց թրաֆիքինգն է, ավանդական տարածքային ընդդատությունը կարող է բավարար չլինել՝ մեղավոր կողմին հետապնդելու համար: Հայաստանը իր Քրեական դատավարության օրենսգրքում դեռևս չի նախատեսել այնպիսի հնարավորություն, որ մարդկանց թրաֆիքինգի հանցանքների վերահսկողությունը տարածվի արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների կողմից կամ նրանց դեմ կատարված հանցագործությունների վրա: Ավելին, ՀՀ օրենսդրությունը չի ընդունում տուժողների հայրենադարձության գաղափարը՝ նրաշխարհելով, որ նրանց իրավունքները կպաշտպանվեն և ծագման երկիր վերադառնալուց հետո նրանք կրկին չեն ենթարկվի սպառնալիքների:

## Միջազգային գործիքները և ՀՀ օրենսդրությունը. ընդհանուր ակնարկ

Մարդկանց թրաֆիքինգը միշտ էլ գլոբալ խնդիր է համարվել, որը սակայն հատկապես մեծ չափերի հասավ Արևելյան Եվրոպայում և Եվրասիայում 90-ականների սկզբին՝ կոմունիստական ռեժիմի փլուզումից հետո: Իրեն յուրահատուկ անդրազգային բնույթի պատճառով դրա դեմ պայքարելու համար հարկավոր է միջազգային համագործակցություն ոչ միայն կազմակերպիչներին ձերբակալելու և զոհերին պաշտպանելու առումով, այլ նաև ապահովելու, որ գործընթացի ժամանակ չտոնահարվեն թրաֆիքինգի գործընթացից տուժածների իրավունքները: Այդ իսկ նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում շրջանակները ավելի ու ավելի են մեծանում և ուշադրություն է դարձվում թրաֆիքինգի մաս հանդիսացող տարաբնույթ գործընթացներին (այդ թվում հարկադրված աշխատանքը, սեռական նպատակներով մարդկանց շահագործումը, այլոց մարմնավաճառության շահագործելը կամ մարդկանց օրգանների առևտուրը), դատապարտելուն զուգահեռ կանխարգելման անհրաժեշտությանը և թրաֆիքինգի ողջ գործընթացի ժամանակ տուժողների իրավունքների օրենսդրական պաշտպանության հստակությանը:

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի կազմակերպության կոնվենցիան» լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և պատժի մասին» արձանագրությունը (Պալերմոյի արձանագրություն) առարկայական քայլ հանդիսացավ մարդկանց թրաֆիքինգի համապարփակ սահմանումը տալու և այն մարդու իրավունքների խախտում դասակարգելու ուղղությամբ:<sup>1</sup> Նախքան 2000թ. նոյեմբերի Պալերմոյի արձանագրության ընդունումը միջազգային ոչ մի գործիք չկար, որ կոնկրետ ուղղված լիներ մարդկանց թրաֆիքինգին, և անդամ պետությունների համար ոչ մի պատրաստի հիմք գոյություն չուներ, որի հետ կարողանային համապատասխանեցնել օրենսդրությունը կամ համակարգելին իրավապահ աշխատանքները: Սույն հաշվետվությունը պատրաստելու դրությամբ 117 երկրներ ստորագրել են Պալերմոյի արձանագրությունը և 85 երկրներ վավերացրել կամ միացել են դրան՝ զգալիորեն ընդլայնելով մարդկանց թրաֆիքինգի ուղղությամբ միջազգային համագործակցության շրջանակը:

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (ԵԽ կոնվենցիա) ուղղված է զարգացնելու Պալերմոյի արձանագրությամբ դրված հիմքերը և ընդարձակելու իր դրույթները զոհերի իրավունքների, միջազգային համագործակցության և գենդերային հավասարության հիմնահարցերի վրա:<sup>2</sup> Հավանաբար ավելի կարևոր է այն հանգամանքը, որ ԵԽ կոնվենցիան ստեղծում է հաշվետվության համակարգ՝ առաջարկելով երկկողմանի, անկախ մոնիտորինգի մեխանիզմ, որը պետք է դիտարկի և հաշվետվություն հրապարակի անդամ պետությունների կողմից կոնվենցիայի կատարման վերաբերյալ: Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է կոնվենցիան 2005թ. մայիսի 16-ին, և Հայաստանը մյուս տասներեք անդամ պետությունների հետ ստորագրել է այն: Թեպետ կոնվենցիան դեռևս չի վավերացվել ԵԽ պետությունների

<sup>1</sup> «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի կազմակերպության կոնվենցիան» լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և պատժի մասին» 2000թ. նոյեմբերի 15-ի թիվ 55/25 արձանագրություն [այսուհետև Պալերմոյի արձանագրություն]:

<sup>2</sup> «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի Խորհրդի 2005թ. մայիսի 16-ի թիվ 197 կոնվենցիա [այսուհետև՝ ԵԽ կոնվենցիա]:

կողմից (նախքան դրա ընդհանուր ուժի մեջ մտնելը 10 պնտություններ պետք է դա անեն), սակայն պարզ է, որ այն հանդիսանում է նոր միջազգային ստանդարտ թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում, որին Հայաստանը պետք է բավարարի՝ կոնվենցիան վավերացնելու դեպքում:

Նախքան Պալերմոյի արձանագրության ընդունումը ՀՀ օրենքը ուղղակիորեն ոչինչ չէր նախատեսում մարդկանց թրաֆիքինգի համար, և օրենքով առաջարկվող թրաֆիքինգի պատժամիջոցները ներառվում էին մարմնավաճառության (տես՝ հավելվածը) և հարկադիր աշխատանքի մասին օրենսդրական դրույթներում: Հայաստանը ստորագրել է արձանագրությունը 2001թ. նոյեմբերին՝ վավերացման գործընթացի միջոցով որդեգրելով թրաֆիքինգի դեմ պայքարի ավելի համապարփակ օրենսդրական մոտեցում: 2003թ. ամռանը Քրեական օրենսգրքում ավելացվել են մարդկանց անտուրը որպես հանցագործություն ճանաչող կոնկրետ հոդվածներ:<sup>3</sup> Մեկ տարի անց ՀՀ Ազգային Ժողովը մարդկանց առևտրին վերաբերող այդ դրույթներում կատարեց փոփոխություններ, որոնք թույլ տվեցին տալ թրաֆիքինգի ավելի համակողմանի սահմանումը (տես՝ հավելվածը):<sup>4</sup> Ներկայումս կառավարությունը քննարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տուժողներին և վկաներին պաշտպանելու վերաբերյալ հոդվածներում փոփոխություններ կատարելու նախագիծը, որը պետք է ավելի զամարժեք կերպով սահմանի մեղադրող կողմի խնդիրները, որ բնորոշ են մարդկանց թրաֆիքինգին:

Չնայած այս առաջխաղացումներին ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են մի շարք դրույթներ, որոնք վերը նշված միջազգային պայմանագրերով առանցքային բաղադրիչներ են համարվում թրաֆիքինգի դեմ պայքարում: Ամենակարևորը, ՀՀ օրենքը քրեական պատասխանատվության է ենթարկում թրաֆիքինգի զոհերին այնպիսի հանցանքների համար, որ նրանք կարող է կատարած լինեն ճնշման կամ ապակողմնորոշող հանգամանքներում; թրաֆիքինգի համար ՀՀ օրենքով նախատեսված պատժամիջոցները մեղմ են և հարցականի տակ են դնում դրանց կանխարգելող արժեքը; դատավարության տուժող կողմի կամ վկաների պաշտպանությանն ուղղված միջոցառումները չեն զարգացել ՀՀ քրեական օրենսգրքի թրաֆիքինգին և այլ իրավախախտումներին վերաբերող հատվածներին համընթաց: ՀՀ օրենքների և միջազգային գործիքների միջև եղած այս բացթողումները պետք է վերացվեն, եթե Հայաստանը ցանկանում է լիակատար համարժեքության հասնել Պալերմոյի արձանագրության հետ և վավերացնել Եև կոնվենցիան:

Սույն վերլուծությամբ նախատեսվում է գնահատել ավելի շուտ օրենսդիր, այլ ոչ թե գործադիր միջոցառումները: Այդ իսկ պատճառով այն ավելի մեծ ուշադրություն է դարձնում օրենսդրության անվանական համապատասխանությանը թրաֆիքինգի դեմ պայքարի պայմանագրերի հետ, որոնց մասնակիցն է Հայաստանը, քան այդ օրենսդրությամբ կամ պայմանագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանը: Ակնհայտ է, որ հետագա ուսումնասիրությունների կարիք կա այն մասով, որտեղ բացակայում է ներքին օրենքի կամ միջազգային գործիքների կիրակումը Հայաստանում:

Վերջապես, Պալերմոյի արձանագրությունը և Եև կոնվենցիան նախատեսում են մարդկանց թրաֆիքինգի, թրաֆիքինգի զոհերի ծառայությունների պահանաջարկի նվազեցման,

<sup>3</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդված (հայերեն) (թարգմանությունը՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն/Իրավական նախաձեռնություն կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի համար (ABA/CEELI)):

<sup>4</sup> Փոփոխությամբ հանվում էր այն պահանջը, որ թրաֆիքինգը տեղի է ունենում բռնության սպառնալիքի, լաբեության կամ շահագործման այլ եղանակներով: Տես՝ ստորև ներկայացված «Մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) սահմանումը վերնագրի «ՀՀ օրենսդրությունը» ենթավերնագիրը:



սահմանների վերահսկողության ուժեղացմանը և ճանապարհորդական կամ անձր հաստատող փաստաթղթերի ապահովության բարձրագույնն ուղղված մի շարք միջոցառումների իրականացում: Այս կանխարգելիչ միջոցառումների վրա սույն հաշվետվությունը շատ չի կանգ առնում:

## Մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) սահմանումը

### *Միջազգային գործիքներ*

Ինչպես Պալերմոյի արձանագրությունը, այնպես էլ ԵՄ կոնվենցիան այնպիսի սահմանում են տալիս թրաֆիքինգին, որ համակողմանիորեն բնութագրում է թրաֆիքինգի երևույթը դրա դրսևորման բոլոր մակարդակներում, ընդլայնում է թրաֆիքինգի ընկալումը զուտ հարկադիր մարմնավաճառության շրջանակներից՝, հավասարեցնելով սեռերը, և հաշվետվություն է պահանջում զոհերի շահագործման տարբեր եղանակների համար.

«մարդկանց թրաֆիքինգ» է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով: Ծահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարագոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը<sup>5</sup>:

Երկու պայմանագրերն էլ թրաֆիքինգի սահմանումից զատ պարունակում են երկու այլ դրույթներ, որոնք ուղղված են թրաֆիքինգի զոհերի համար հստակ պաշտպանություն ապահովելուն: Առաջին նրաշխիքն այն է, որ վերը նշված շահագործման այս կամ այն ձևի կիրառման վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձի այսպես կոչված համաձայնությունը՝ թրաֆիքինգի համար պատժվելուց պաշտպանություն չի համարվում:<sup>6</sup> Սրանով ընդունվում է, որ շատ դժվար է փորձել սահմանել, թե ինչ է իրենից ներկայացնում համաձայնությունը, ինչպես նաև այն փաստը, որ թրաֆիքինգի շատ զոհեր՝ թրաֆիքինգի գործընթացի մեջ կամավոր կերպով ներգրավվելու սկզբնական շրջանում կարող է ամբողջական պատկերացում ունեցած չլինեն, թե ինչ է իրենց սպասում:

Երկրորդ դրույթը ավելի ցածր սահման է ստեղծում երեխաների թրաֆիքինգի (18 տարին չլրացած ցանկացած անձ) համար՝ շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված երեխաների համար վերագնելով սահմանման մեջ առկա ուժի, հարկադրանքի, առևանգման, խարդախության և այլ միջոցների կիրառման պահանջը:<sup>7</sup> Կոնվենցիան սրանով ընդունում է ավելի ցածր սահման՝ հաճախ նաև երեխաների ներգրավվածություն թրաֆիքինգի մեջ, որոնցից շատերին կարելի է շահագործել առանց ուժի, հարկադրանքի, առևանգման, խարդախության կիրառման, որոնք կարող են պահանջվել չափահասների շահագործման ժամանակ:

<sup>5</sup> Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդված, ԵՄ կոնվենցիայի 4-րդ հոդված:

<sup>6</sup> Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդվածի բ) կետ, ԵՄ կոնվենցիայի 4-րդ հոդվածի բ) կետ:

<sup>7</sup> Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդվածի գ) կետ, ԵՄ կոնվենցիայի 4-րդ հոդվածի գ) կետ:

**ՀՀ օրենսդրություն**

Պալերմոյի արձանագրությունը վավերացնելուց հետո Հայաստանում ընդունված թրաֆիքինգի սահմանումը ընդհանուր առմամբ համապատասխանում է վերը նշված միջազգային գործիքներին: 2003թ. օգոստոսին ընդունված և 2004թ. հունիսին փոփոխված ՀՀ քրեական օրենսդրության 132-րդ հոդվածը որպես թրաֆիքինգ է սահմանում «մարդուն գնելը կամ վաճառելը, հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է նրան պոռնկության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարազոր վիճակի հասցնելու կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով»:<sup>8</sup> Ելնելով այն հանգամանքից, որ շարադրանքը մի շարք առումներով գրեթե համընկնում է Պալերմոյի արձանագրության և ԵՄ կոնվենցիայի շարադրանքի հետ՝ Հայաստանի դրույթը նմանապես համակողմանիորեն է բնութագրում թրաֆիքինգի բազմաթիվ մակարդակները, դրա դրսևորման տարբեր ձևերը (մարմնավաճառություն, հարկադիր աշխատանք, օրգանների առևտուր և այլն) և գենդերային հավասարությունը: Այն նաև համընկնում է միջազգային կոնվենցիաների այն պահանջի հետ, որ թրաֆիքինգը զոհին շահագործելու որոշակի նպատակ է հետապնդում (հիմնական և փոփոխված հոդվածների համար տես հավելվածը):

Թրաֆիքինգի հայկական սահմանման և միջազգային կոնվենցիաների միջև եղած նշանակալից տարբերություններից մեկն այն է, որ հայկական սահմանումը չի պահանջում, որ թրաֆիքինգը տեղի ունեցած լինի ուժի, հարկադրանքի, առևանգման, խարդախության, խաբեության կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու միջոցով: Միջոցների պահանջի այս բացակայությունը զգալիորեն իջեցնում է չափահասների թրաֆիքինգի դատական կարգով հետապնդման սահմանը՝ հավասարեցնելով միջազգային կոնվենցիաներով նախատեսված նրեյսաների թրաֆիքինգի դատապարտման սահմանին, դրանով իսկ հայկական տարբերակում հեշտացնելով թրաֆիքինգի ապացուցման հավանականությունը (քանի որ պահանջներն ավելի քիչ են): Միջոցների պահանջը հանվել է ՀՀ քրեական օրենսգրքից 2004թ. հունիսին կատարված փոփոխությունների արդյունքում, սակայն պարզ չէ, թե ինչ ազդեցություն կունենան այդ փոփոխությունները Հայաստանում թրաֆիքինգը դատապարտելու գործընթացի վրա:

Վերջապես, Հայաստանում նրեյսաների թրաֆիքինգի քրեական պատասխանատվությունը մի փոքր մշուշոտ է, քանի որ առանձին դրույթով՝ 168-րդ հոդվածով նրեյսաների թրաֆիքինգը համարվում է անօրինական, սակայն իրավախախտման սահմանումը չի տրվում, ինչպես նաև չի նշվում, թե որքանով է այն կապված կամ ինչ հարաբերության մեջ այն գտնվում 132-րդ հոդվածի հետ (տես՝ հավելվածը):<sup>9</sup> Իհարկե 132-րդ հոդվածի սահմանման հիմնական մասում ուղղակիորեն չի նշվում նրեյսաների մասին, հավանաբար, այն պատճառով, որ սահմանման մեջ տեղ չեն գտել միջոցների պահանջները, որոնք միջազգային կոնվենցիաներում օգտագործվում են նրեյսաներին և չափահասներին տարբերակելու համար: Բացի այդ դեռահասների ներգրավումը 132-րդ հոդվածով համարվում է որպես ծանրացնող հանգամանք: Նրեյսաների թրաֆիքինգի ոչ հստակ սահմանման բացակայությունը հանգեցնում է ոչ հստակ պատժամիջոցների, որոնք առավել մանրամասնորեն քննարկված են ստորև:

<sup>8</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>9</sup> Նույն տեղում, 168-րդ հոդված:

**Ամփոփում. Մարդկանց թրաֆիքինգի հայկական սահմանման հետ կապված հիմնահարցեր**

- Սահմանման մեջ որևէ դրույթ չկա, որով վերացվում է գոհի համաձայնությունը որպես թրաֆիքինգի համար պատժվելուց պաշտպանվելու միջոց և մեղադրող կողմի հայեցողությամբ հնարավորություն է տրվում, որ թրաֆիքինգի քրեական հետապնդման գործը չշարունակվի կամ մնա անավարտ:
- Երեխաների թրաֆիքինգի համար առանձին բայց վատ կերպով սահմանված հանցանքը շեղում է մարդկանց թրաֆիքինգի ընդհանուր սահմանումից:

**III. Ընդհանուր միջոցառումներ*****Միջազգային գործիքներ***

Միջազգային կոնվենցիաները, մասնավորապես, Եև կոնվենցիան պարունակում են մի շարք այլ դրույթներ, որոնք նախատեսված են թրաֆիքինգի հետ կապված այլ գործողությունները քրեականացնելու համար: Կոնվենցիայով նախատեսվող որոշ միջոցներ ուղղված են մասնավորապես մարդկանց թրաֆիքինգից բխող խնդիրներին, իսկ որոշներն էլ անդրադառնում են որոշակի սկզբունքների, ինչպիսին օրինակ կորպորատիվ պատասխանատվությունն է կամ էլ դեռևս չավարտված օրինագրանցումների քրեականացումը, որոնք շատ ազգային քրեական օրենսգրքերի սովորական բաղադրիչ մասերից են:

Այդ միջոցառումներից առաջինը հանդիսանում է թրաֆիքինգի գոհի ծառայություններից գիտակցաբար օգտվելու անկախ քրեականացումը, եթե իհարկե այդ անձնավորությունը իրոք գոհ է հանդիսանում:<sup>10</sup> Սա միանշանակորեն նախատեսված է նվազեցնելու նման ծառայությունների պահանջարկը՝ պատասխանատվություն առաջացնելով ծառայություններից օգտվողների շրջանում, որոնք այլ իրավիճակում հնարավորություն կունենային, առանց իրենց որևէ ռիսկի ենթարկելու, օգտվել թրաֆիքինգի գործընթացից: Թեպետ այս դրույթը պայմանական է, այնուամենայնիվ Եև կոնվենցիայի մասնակցները պետք է միայն քննարկեն նման ծառայություններից օգտվելու քրեականացման տարբերակը, իսկ դրա ընդունումը որպես իրավապաշտպան գործիք խիստ ցանկալի է՝ հատկապես ելնելով կոնվենցիայի այն պահանջից, որ նման հանցանքի մեջ դատապարտվող յուրաքանչյուր ոք պետք է որ իմացած լինի, որ ծառայությունները տրամադրվել են թրաֆիքինգի գոհերի կողմից: Եև կոնվենցիայի բացատրական հաշվետվությունը ընդունում է, որ հաճախ դժվար կլինի ապացուցել, որ ծառայություններից օգտվողն իմացել է ծառայություններ տրամադրողի թրաֆիքինգի գոհ հանդիսանալու մասին: Այդ իսկ պատճառով, այն ամրագրում է, որ այդ մասին տեղյակ լինելու որոշումը թողնվում է դատարանի հայեցողությանը՝ հիմք ընդունելով գործի վերաբերյալ եղած փաստերը:<sup>11</sup>

Թրաֆիքինգի հետ կապված դրսևորումների համար նախատեսված երկրորդ միջոցառումը հանդիսանում է ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված արարքների քրեականացումը, որը թրաֆիքինգի շղթայում ակնհայտորեն հանդիսանում է առանձնակի կարևորության ոլորտներից մեկը: Եև կոնվենցիայի 20-րդ հոդվածը քրեականացնում է ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթ կեղծելը, ձեռք բերելը, տրամադրելը, պահելը, տեղափոխելը, թաքցնելը, վնասելը կամ ոչնչացնելը, եթե

<sup>10</sup> Եև կոնվենցիայի 19-րդ հոդված:

<sup>11</sup> Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի բացատրական հաշվետվություն, Գ 235 [այսուհետև Եև կոնվենցիայի բացատրական հաշվետվություն]:

դրանք կատարվել են «դիտավորությանը և մարդկանց թրաֆիքինգի նպատակով»:<sup>12</sup> Ըստ բացատրական հաշվետվության՝ կոնվենցիան մշակողները հատկապես կարևոր են համարել ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթուղթ պահելը, տեղափոխելը կամ թաքցնելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թրաֆիքինգի կազմակերպիչները սովորաբար նման եղանակներ են կիրառում գոհերին հսկելու համար:<sup>13</sup> Ուշադրության արժանի է այն փաստը, որ այդ հոդվածը չի քրեականացնում կեղծված կամ փոփոխված փաստաթղթեր ունենալը, քանի որ դա առաջին հերթին կազմեր թրաֆիքինգի գոհերի վրա:<sup>14</sup>

Երրորդ՝ Պալերմոյի արձանագրությունը և ԵՍ կոնվենցիան սահմանում են մարդկանց թրաֆիքինգի հանցակիցների պատասխանատվություն, իսկ ԵՍ կոնվենցիան դա տարածում է նաև վերը նշված ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված արարքների վրա:<sup>15</sup> Երկու միջազգային գործիքներն էլ պատասխանատվություն են պահանջում թրաֆիքինգի հանցափորձ կատարելու համար: ԵՍ կոնվենցիան պատասխանատվություն է նախատեսում նաև ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերը կեղծելու հանցափորձ կատարելու համար, սակայն նման փաստաթղթեր ձեռք բերելու կամ փոփոխելու հանցափորձ կատարելու համար՝ ոչ (հավանաբար վերջին ոլորտներում նման փորձերը սահմանելու հայացակարգային բարդությունների պատճառով):

Չորրորդ՝ ԵՍ կոնվենցիան պահանջում է, որ կոնվենցիայով նախատեսված թրաֆիքինգի բոլոր հանցավոր արարքների համար մասնակից պետությունները սահմանեն կորպորատիվ պատասխանատվություն՝ քաղաքացիական, քրեական կամ վարչական:<sup>16</sup> Նման պատասխանատվություն առաջանում է, երբ հանցավոր արարքը կատարվում է կորպորացիայում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի (կամ «իրավաբանական անձի») կողմից և հանցավոր արարքը շահավետ է դիտարկվող կորպորացիայի համար: Նույն կերպով, կոնվենցիան պատասխանատվություն է նախատեսում այն դեպքերի համար, երբ կորպորացիայում թույլ վերահսկողության պատճառով հնարավորություն է ստեղծվում կոնվենցիայով սահմանված հանցավոր արարքների կատարման համար: Այս դրույթը մշակված է քրեական հանցանքների համար կորպորատիվ պատասխանատվություն կիրառելու ընդհանուր միտումներին համապատասխան, սակայն չի բացառում խախտումների համար առանձին անհատների պատասխանատվություն կանչելու հնարավորությունը: Պալերմոյի արձանագրության ավելի սահմանափակ շրջանակներով նմանատիպ դրույթը քրեականացնում է արձանագրության նախատեսված հանցավոր արարքների «կազմակերպումը կամ այլ անձանց ղեկավարելը դրանք կատարելու համար»:<sup>17</sup>

Հինգերորդ՝ ԵՍ կոնվենցիան պահանջում է, որ պատժամիջոցները լինեն հնարավորին չափ տարհամոզող և համամասնական այն հանցանքներին, որոնց համար սահմանված են: Կոնվենցիան նշում է, որ հնարավոր պատժամիջոցների շրջանակը պետք է ներառի ազատազրկում՝ ֆիզիկական անձանց համար և դրամական պատժամիջոցներ, հանցավոր միջոցների բռնագրավում և թրաֆիքինգի նպատակով օգտագործվող հաստատություններ փակում՝ իրավաբանական անձանց համար:<sup>18</sup> Սույն դրույթի մանրամասները թողնվում է

<sup>12</sup> ԵՍ կոնվենցիայի 20-րդ հոդված:

<sup>13</sup> ԵՍ կոնվենցիայի բացատրական հաշվետվություն, Գ 241.

<sup>14</sup> Նույն տեղում, Գ 240.

<sup>15</sup> Պալերմոյի արձանագրության 5-րդ հոդված, ԵՍ կոնվենցիայի 21-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>16</sup> ԵՍ կոնվենցիայի 22-րդ հոդված:

<sup>17</sup> Պալերմոյի արձանագրության 5-րդ հոդված:

<sup>18</sup> ԵՍ կոնվենցիայի 23-րդ հոդված:

առանձին անդամ պետությունների հայեցողությանը և պահանջ չի ներկայացվում, որ պատժամիջոցները լինեն կոնկրետ քրեական, քաղաքացիական կամ վարչական:

Վեցերորդ՝ ԵՍ կոնվենցիան թրաֆիքինգի համար նախատեսում է մի շարք ծանրացնող հանգամանքներ, երբ դիտավորությամբ կամ մեծ անփութությամբ կատարված հանցավոր արարքը սպառնալիք է ստեղծել տուժածի կյանքի համար (օրինակ՝ տրնսպորտային վատ պայմանների պատճառով), երբ հանցավոր արարքը կատարվել է նրեխալի նկատմամբ, երբ հանցավոր արարքը կատարվել է պետական պաշտոնյայի կողմից՝ իր պաշտոնական պարտականությունները կատարելիս և, երբ հանցավոր արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության շրջանակներում:<sup>19</sup> Ինչպես վերը նշված պատժամիջոցների դեպքում, այնպես էլ ծանրացնող հանգամանքների աստիճանը որոշելը կոնվենցիան թողնում է անդամ պետությունների հայեցողությանը:

Եվ վերջապես, որ թերևս ամենակարևորն է, ԵՍ կոնվենցիան պահանջում է, որ անդամ պետությունները նախատեսեն զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար:<sup>20</sup> Սա միանշանակորեն ընդունում է այն փաստը, որ հաճախ զոհերը ստիպված են լինում ներգրավվել այնպիսի ապօրինի գործողություններում, ինչպիսիք են մարմնավաճառությունը կամ անօրինական սահմանափակումները և պատասխանատվություն չպետք է կրեն նման գործողությունների համար, եթե նրանց ազատությունը սահմանափակված է եղել հանցագործների կողմից կամ թրաֆիքինգով: Կոնվենցիայի բացատրական հաշվետվությունը նշում է, որ նվազագույնը պետք է ենթադրվի, որ զոհի վրա ճնշում է գործադրվել, եթե նրա նկատմամբ կիրառվել է թրաֆիքինգի սահմանման մեջ բերված անօրինական գործողություններից որևէ մեկը՝ ուժի սպառնալիք կամ ուժի գործադրում կամ հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառում, առևանգում, խարդախություն, խաբեություն, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահում:<sup>21</sup>

**ՀՀ օրենսդրություն**

Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարին նվիրված դրույթները փոփոխվել են 2004թ. հունիսին՝ Պալերմոյի արձանագրությանը ավելի շատ համապատասխանեցնելու համար, սակայն դրանք չեն պարունակում այս բաժնում ներկայացված ԵՍ վերջին կոնվենցիայի որոշ ավելի ավելի խիստ միջոցառումներ: Եթե վավերացման գործընթացի ժամանակ ՀՀ օրենքները պետք է համապատասխանեցվեն կոնվենցիայի հետ, ապա որոշ լուրջ փոփոխություններ կատարելու կարիք կլինի:

Մասնավորապես, Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված դրույթները անկախաբար չեն քրեականացնում թրաֆիքինգի զոհի ծառայություններից գիտակցաբար օգտվելու փաստը: Ի հարկե, ՀՀ քրեական օրենսդրության այլ մասերում առանձին կերպով դիտարկվում են թրաֆիքինգի հետ կապված հանցանքներ, սակայն դա այնպես չի արվում, որ լամբակային ձևով նվազեցնի թրաֆիքինգի զոհերի կողմից տրամադրված ծառայությունների պահանջարկը: Օրինակ՝ 261-րդ և 262-րդ հոդվածներով դիտարկվում է մարմնավաճառության մեջ ներգրավված լինելու և կազմակերպելու հետ կապված հարցերը, սակայն դրույթներից և ոչ մեկը չի քրեականացնում թրաֆիքինգի ենթարկված

<sup>19</sup> Նույն տեղում, 24-րդ հոդված:

<sup>20</sup> Նույն տեղում, 26-րդ հոդված:

<sup>21</sup> ԵՍ կոնվենցիայի բացատրական հաշվետվություն, Գ 235.

մարմնավաճառների տրամադրած ծառայություններից գիտակցաբար օգտվելու փաստը (տե՛ս հավելվածը):<sup>22</sup> Նույն կերպով 133-րդ հոդվածը դիտարկում է ազատությունից անօրինաբար կերպով զրկելը (բացի առևանգումից), որ կարող էր ներառել հարկադիր աշխատանքը, սակայն չի քրեականացնում հարկադիր աշխատանք կատարողների տրամադրած ծառայություններից գիտակցաբար օգտվելու փաստը:<sup>23</sup> Այդ իսկ պատճառով իրավապաշտպան մարմինները սահմանափակ հնարավորություններ ունեն՝ թրաֆիքինգի հետ առնչվող տարբեր քրեական գործընթացների դեմ պայքարելու համար:

Երկրորդ՝ չնայած, որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի քրեականացնում պաշտոնական փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը,<sup>24</sup> սակայն խորհուրդ է տրվում ավելի խստ պատժամիջոցներ նախատեսել հատուկ թրաֆիքինգը հնարավոր դարձնելու նպատակով ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերը կեղծելու, ձեռք բերելու կամ պահելու համար: Ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների համապատասխանեցումը թրաֆիքինգի գործընթացին կարող է նպատակահարմար լինել այն առումով, որ նման փաստաթղթերի օգտագործումից առավել նախընտրելի կդառնան այնպիսի մեթոդները, ինչպիսիք են, օրինակ՝ փոստաթղթերը պահելը կամ թաքցնելը, որոնք հաճախ կիրառվում են թրաֆիքինգի գործընթացի ղեկավարման համար պատասխանատու անձանց կողմից: Թրաֆիքինգի գոհների համար սա կվերացնի պատժվելու վտանգը և իրավապաշտպան մարմինների համար լրացուցիչ գործիք կհանդիսանա՝ թրաֆիքինգի կազմակերպիչներին դատապարտելու համար:

ՀՀ քրեական օրենսգիրքն արդեն ունի ավանդական, համակողմանի մեխանիզմներ, որոնք դիտարկում են վերը նշված երրորդ ոլորտը՝ հանցակցի պատասխանատվությունը և հանցափորձը:<sup>25</sup> Այդուհանդերձ, ՀՀ օրենքում դեռևս պետք է ավելացնել որոշ համապարփակ քրեական պատժամիջոցներ չորրորդ՝ կորպորատիվ պատասխանատվության ոլորտում: Վարչական տուգանքները, որ ներկայումս կարող են Հայաստանում կիրառվել իրավաբանական անձանց նկատմամբ, տարհամոզիչ բնույթ չունեն, որպեսզի կորպորացիային կամ կազմակերպությանը ստիպեն պատասխան տալ, որևէ հանցավոր արարքի համար, որին նրանք կարող է մասնակցած լինեն: Ի հարկե քրեական պատժամիջոցների հնարավորությունը, այդ թվում խստ տուգանքները, գույքի և միջոցների բռնագրավումը կամ հաստատությունների փակումը կարող են լսթանել կանխարգելիչ գործողությունների իրականացումը տրանսպորտային ծառայությունների, տուրիստական գործակալությունների, հյուրանոցների կամ թրաֆիքինգի գործընթացի հետ սովորաբար առնչվող այլ իրավաբանական անձանց կողմից:

Պատժամիջոցների համամասնության առումով ՀՀ օրենքը բավականաչափ մեղմ է: 132-րդ հոդվածը նախատեսում է, որ մարդկանց առևտուրը (ծանրացուցիչ հանցամասնքներ չլինելու դեպքում) պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:<sup>26</sup> Հոդվածը ոչինչ չի նախատեսում, թե ինչպես պետք է պատժամիջոցներն ընտրվեն առաջարկվող տարբերակների միջից: Հայաստանում գոյություն չունեն նաև դատապարտելու չափորոշիչներ, որոնց միջոցով հնարավոր կլինի չափել վարվելակերպի ծանրության աստիճանը: Ավելի կարևոր է այն փաստը, որ ընդհանուր

<sup>22</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ և 262-րդ հոդվածներ:

<sup>23</sup> Նույն տեղում, 133-րդ հոդված:

<sup>24</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ և 325-րդ հոդվածներ:

<sup>25</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ և 39-րդ հոդվածները:

<sup>26</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդված:

առմամբ պատժամիջոցները տարհամոզիչ բնույթ չունեն, որոնք հարկավոր են թրաֆիքինգի գործընթացի վրա ազդելու համար: ՀՀ քրեական օրենսդրությամբ առաջարկվող նվազագույն աշխատավարձը կազմում է 1000 դրամ՝ մոտ 2.22 ԱՄՆ դոլար, որը նշանակում է, որ թրաֆիքինգի համար տուգանքը Հայաստանում կարող է այնքան ցածր լինել, որ կազմի 667 ԱՄՆ դոլար, որը թրաֆիքինգի կազմակերպիչների մեծամասնության համար աննշան գումար է կազմում: Նման իրավիճակում գտնվող երկրներում թրաֆիքինգի համար սահմանված նվազագույն պատիժը ազատազրկումն է՝ զիտակցելով, որ միայն տուգանքները քիչ օգուտ կարող են տալ՝ թրաֆիքինգի շղթան քանդելու հարցում:<sup>27</sup> Նույնիսկ օրենսգրքով նախատեսված ավելի խիստ պատժամիջոցները, ինչպես օրինակ՝ մինչև չորս տարվա ազատազրկումը, դժվար թե ետ կանգնեցնեն թրաֆիքինգի կազմակերպիչներին կամ ազատազրկումից հետո դրան վերադառնալուն, եթե նրանց համար այդ գործընթացը բավականաչափ շահավետ է եղել:

Բացի այդ օրենսգիրքը հստակորեն չի նախատեսել թրաֆիքինգի համար նախատեսված բոլոր պատժամիջոցները, որոնք պահանջում է ԵՄ կոնվենցիան: Հավանաբար այդ պատժամիջոցներից ամենաարժանահիշատակը հանդիսանում է կոնվենցիայով նախատեսված քրեական իրավախախտումների հետևանքով միջոցների բռնագրավումը: Իհարկե, Հայաստանը հանդիսանում է «Հանցավոր ճանապարհից ստացվող միջոցների/եկամուտների լվացման, հայտնաբերման, առգրավման ու բռնագանձման մասին» ԵՄ կոնվենցիայի մասնակից և ՀՀ քրեական օրենսգրքը լուրջ հանցանքների համար պարունակում է ընդհանուր դրույթներ ունեցվածքի բռնագանձման վերաբերյալ:<sup>28</sup> Ինչևիցե, անկախ Հայաստանում այս պատժամիջոցի առկայությունից, այն ներառված չէ թրաֆիքինգի համար կիրառվող պատժամիջոցների ցանկում: Ելնելով այն հանգամանքից, որ թրաֆիքինգը որակվում է որպես կազմակերպված հանցագործության տեսակ և հաճախ կապված է լինում զգալի շահույթների հետ, ապա միջոցների բռնագրավումը կարող է հզոր գործիք հանդիսանալ՝ թրաֆիքինգի ցանցի արդյունավետությունը խաթարելու համար: Բռնագրավված միջոցները կարելի է նաև ուղղել Հայաստանում զոհերի աջակցման ֆոնդին. մեթոդ, որ կիրառելի է նման իրավիճակում գտնվող որոշ երկրներում:<sup>29</sup>

Վեցերորդ՝ ծանրացուցիչ հանգամանքների ոլորտում, ՀՀ օրենսդրությունը համապարփակ է, բայց միևնույն է մեղմ է: ՀՀ օրենքը երկու մակարդակով դիտարկում է միջազգային գործիքներով նախատեսված բոլոր ծանրացուցիչ հանգամանքները: Առաջին մակարդակը դիտարկում է մեկից ավելի անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, կամ անչափահասների նկատմամբ կամ պաշտոնական դիրքը չարաշահելու միջոցով կատարված արարքները: Երկրորդ մակարդակը սահմանում է ավելի խիստ պատժամիջոցներ առաջին մակարդակի արարքների համար, եթե դրանք կատարվել են կազմակերպված խմբի կողմից կամ անզուգույնությամբ առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ:<sup>30</sup> Ինչ վերաբերում է պատժամիջոցներին, ապա առաջին մակարդակով նախատեսվում է ուղղիչ աշխատանք՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ ազատազրկում՝ չորսից յոթ տարի ժամկետով, իսկ երկրորդ մակարդակով պահանջվում է ազատազրկում՝ հինգից ութ տարի ժամկետով: Այս պատիժները համեմատելի չեն այլ

<sup>27</sup> Հակաթրաֆիքինգային օրենսդրական դաշտի տեղեկատու-ուղեցույց, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, սեպտեմբեր 2001թ. էջ 42-45 [այսուհետ՝ տեղեկատու-ուղեցույց]

<sup>28</sup> ԵՄ կոնվենցիան հանցավորությունից ստացվող միջոցների/եկամուտների լվացման, հայտնաբերման, առգրավման ու բռնագանձման մասին, 8 նոյեմբերի 1990թ., CETS 141, հոդված 2. Քրեական օրենսգիրք, հոդված 55

<sup>29</sup> Տես օր.՝ տեղեկատու-ուղեցույց, Կոսովո/FRY, 44.

<sup>30</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մաս:

քրեական օրենսգրքերի հետ, որոնց մի մասը ծանրացուցիչ հանգամանքներում թրաֆիքինգի համար դատապարտում է գնահ ազատագրման:<sup>31</sup>

Վերջապես, որ կրկին կարևոր է, Հայաստանի օրենքը հստակ միջոցառումներ չի նախատեսում, որոնցով թրաֆիքինգի գոհերն ազատվում են պատասխանատվությունից՝ հարկադրանքի տակ կատարված հանցանքների համար: Արդարացման ընդհանուր սկզբունքների շարքում ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պաշտպանության անհրաժեշտություն, սակայն այդ պաշտպանության պահանջները բավարարելը դժվար է, քանի որ դրանք ուղղված են հանցագործի ինքնապաշտպանությանը կամ այլոց պաշտպանելուն, և ամուր հիմքեր չեն առաջարկում թրաֆիքինգի գոհերին դատական կարգով հետապնդումից ազատելու հայցի ներկայացման համար:<sup>32</sup> Ավելին՝ օրենսգիրքը չի ազատում ճնշման տակ կատարված հանցանքներից, որոնք հանդիսանում է թրաֆիքինգի գոհերի կողմից կատարված հիմնական հանցատեսակը: Սա գոհերին խոցելի է դարձնում մի շարք իրավախախտումների համար՝ ներառյալ կեղծված կամ փոփոխված փաստաթղթերի օգտագործումը (325-րդ հոդված), ապօրինի սահմանհատումները (329-րդ հոդված) կամ հանցավոր համագործակցությունը (223-րդ հոդված):

Բացի այդ առկա ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 183-րդ հոդվածում սխալ կա (Միայն տուժող կողմի բողոքի համաձայն քրեական գործի հարուցում), որը 132-րդ հոդվածը դասում է այն դրույթների շարքում, որոնց հիման վրա կարող է քրեական գործ հարուցվել միայն տուժող կողմի բողոքի հիման վրա և հաշտության հնարավորություն է տալիս դատավճիռ կայացնելու համար դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը:<sup>33</sup> ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի վերջին՝ 2005թ. օգոստոսի փոփոխությունները իրավիճակը չեն շտկում:

### Ամփոփում. Թրաֆիկինգի վերաբերյալ Հայաստանի օրենսդրական ընդհանուր միջոցառումների հետ կապված հիմնահարցեր

- Հայաստանի օրենքը խիստ պատիժներ չի սահմանում թրաֆիքինգի նպատակով մեկ այլ անձնավորության ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերը կեղծելու կամ փոփոխելու, կամ ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու, թաքցնելու, վնասելու կամ ոչնչացնելու համար:
- ՀՀ օրենքներում կան մի քանի համապատասխան մեխանիզմներ՝ մարդկանց թրաֆիքինգի համար կորպորատիվ մարմիններին կամ կազմակերպություններին պատասխանատվության կանչելու համար:
- Նույնիսկ ծանրացուցիչ հանգամանքների առկայության դեպքում թրաֆիքինգի պատժամիջոցներն այնքան խիստ չեն, որպեսզի տարհանոգեն թրաֆիքինգի կազմակերպիչներին, իսկ թրաֆիքինգի դեմ պայքարի իրավապաշտպան գործիքների մեջ չկա միջոցների բռնագրավում:
- Թրաֆիկինգի գոհերը խոցելի են նույնիսկ հարկադրանքի տակ կատարած հանցանքների համար դատապարտվելուց:
- Ընթացիկ ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 183-րդ հոդվածում սխալ կա, որը 132-րդ հոդվածը դասում է այն դրույթների շարքում, որոնց հիման վրա կարող է քրեական գործ հարուցվել միայն տուժող կողմի բողոքի հիման վրա:

<sup>31</sup> Տեղեկատու-ուղեցույց, 42-45.

<sup>32</sup> Տես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածը:

<sup>33</sup> Սխալը հավանաբար կապված է ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ, որի արդյունքում հոդվածների համարակալումը փոխվել է, իսկ ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքում հապատասխան փոփոխություններ չեն կատարվել:



#### IV. Ձոհների պաշտպանությունն ու նրանց ցուցաբերվող աջակցությունը

##### *Միջազգային գործիքներ*

Ձոհների տվյալների գաղտնիության պահպանումը մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների նկատմամբ արդյունավետ քրեական հետապնդում իրականացնելու ու զոհների ֆիզիկական պաշտպանությունը ապահովելու համար խիստ էական է: Նույն կերպ թրաֆիքինգի հասցրած վնասները մեղմացնելու արմատական գործոններից է հասարակությանը վերահսկողությունը հարցում զոհներին ցուցաբերվող աջակցությունը: Պալերմոյի արձանագրությամբ որոշակի ուշադրություն է դարձվում զոհների պաշտպանությանը, մասնավորապես աջակցության և հայրենադարձության մասով<sup>34</sup>: ԵՄ կոնվենցիան այս առումով ավելի հեռու է գնում: Դրա հիմնական խնդիրներից է որոշակի պաշտպանական միջոցառումների խորացումը, հաճախ քրեական դատավարության ընթացքում, որպեսզի զոհների ու վկաների համար դատական վարույթի ընթացքում և դրանից հետո լինի ամբողջական պաշտպանություն: Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են այդ համաձայնագրերի այն մասերը, որոնց հետ կապված անհրաժեշտ են օրենսդրական քայլեր ձեռնարկել:

ԵՄ կոնվենցիայով առաջ քաշվող առաջին ընթացակարգային պաշտպանություններից մեկն այն է, որ թրաֆիքինգային խախտումներով հետաքննությունների ու հետախուզման նախապայմանը չլինի զոհի կողմից բողոքի կամ մեղադրանքի ներկայացումը<sup>35</sup>: Այս դրույթը նպատակ ունի թրաֆիքինգային խախտումներ թույլ տված անձանց ձեռքազրկման հարցում առկա այդ թույլ կողմը վերացնելու, քանի որ այսպիսի խախտում թույլ տված անձինք հաճախ մեծ ճնշում են գործադրում զոհների վրա ու ետ են պահում նրանց պետական մարմիններին դիմելուց: Իրավապահ կառույցները կկարողանան շրջանցել այս խոչընդոտներն ու հետաքննություն սկսել կամ մեղադրանք ներկայացնել առանց տուժողներից քրեական բողոք ստանալու:

Ընթացակարգային միջոցառումների երկրորդ խումբը փորձում է երաշխավորել գաղտնիությունը ու տվյալների գաղտնիությունը դատական վարույթների ընթացքում: Պալերմոյի արձանագրությամբ պահանջվում է, որ այն վավերացնող երկրները երաշխավորեն «մարդկանց թրաֆիքինգի զոհների տվյալների ու անձի գաղտնիությունը, այդ թվում ապահովելով թրաֆիքինգին առնչվող իրավական վարույթների գաղտնիությունն ի թիվս այլոց»<sup>36</sup>: Արձանագրությունը հետագա մանրամասներ չի ապահովում այն հանգամանքների վերաբերյալ, որոնց պարագայում գաղտնիությունը կլինի հիմնավորված կամ պարտադիր: ԵՄ կոնվենցիան տուժողների տվյալների գաղտնիության մասով մի փոքր ավելի որոշակի դրույթներ ունի: Այն ասում է, որ նրանց անձնական տվյալները պետք է պահպանվեն և օգտագործվեն Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթներին համապատասխան<sup>37</sup>: Այն նաև տարբերակում է մտցնում տուժողների մասնավոր կյանքի գաղտնիության ու դատական վարույթների գաղտնիության միջև՝ առանձնացնելով այդ երկու կողմերի գաղտնիության ապահովումն ու պահանջում է հատուկ միջոցներ ձեռնարկել թրաֆիքինգից տուժած երեխաների անձի գաղտնիության ապահովման մասով<sup>38</sup>:

<sup>34</sup> Պալերմոյի արձանագրության 6-րդ և 8-րդ հոդվածներ:

<sup>35</sup> ԵՄ կոնվենցիայի 27-րդ հոդված:

<sup>36</sup> Պալերմոյի արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետ:

<sup>37</sup> ԵՄ կոնվենցիա, հոդված 11.1:

<sup>38</sup> Նույն տեղում, հոդված 30; հոդված 11.2:

Միջազգային համաձայնագրերով առաջ քաշվող ընթացակարգային միջոցների երրորդ խումբն առնչվում է զոհերի ֆիզիկական պաշտպանությանը: Պալերմոյի արձանագրությունը պարզապես վավերացնող երկրներին կոչ է անում «ձեռնամուխ լինել իրենց տարածքում մարդկանց թրաֆիքինգի զոհերի ֆիզիկական անվտանգությունը»<sup>39</sup>: Եև կոնվենցիան սովորականի նման առաջարկում է ավելի որոշակի քայլեր, որ պետք է ձեռնարկվեն կոնվենցիան վավերացնող երկրների կողմից՝ պաշտպանությունը տարածելով ոչ միայն տուժողների, այլ նաև մյուս վկաների վրա, որոնք համագործակցում են իրավապահ մարմինների հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տարածելով նաև նշված խմբերի անդամների վրա<sup>40</sup>: Հիշատակման արժանի է նաև այն, որ կոնվենցիան պաշտպանություն է նախատեսում դատավարությանը մասնակցող հասարակական կազմակերպությունների կամ այլ ընկերակցությունների անդամների համար<sup>41</sup>: Այդ պաշտպանությունը ներառում է ֆիզիկական պաշտպանության երաշխիքներից, տեխնիկական ապահովության սարքավորումներից մինչև բնակության վայրի, անձնական տվյալների ու աշխատանքի վայրի փոփոխությունը: Հայաստանի համար հատուկ կարևորություն ներկայացնող մի լրացուցիչ կետ էլ հանդիսանում է այն, որ կոնվենցիան խրախուսում է մասնակից երկրներին համաձայնագրեր կնքել այլ երկրների հետ՝ պաշտպանական միջոցառումների իրականացման նպատակով<sup>42</sup>:

Ի վերջո այս փաստաթղթերում կան նաև մի շարք նշանակալի միջոցառումներ, որոնք միասին վերցրած կարելի է անվանել զոհերի աջակցություն կամ օժանդակություն: Սրանք ուղղված են հոգալու զոհերի ունեցած կարիքների ողջ ընտրանին, ինչպես նաև շտկելու այն պայմանները, մասնավորապես՝ աղքատությունը, ծառայություններից օգտվելու անհնարինությունը և ֆիզիկական խոցելիությունը, որոնք ամրապնդում են թրաֆիքինգ երևույթի կրկնվող բնույթը: Այստեղ Պալերմոյի արձանագրությունը պահանջում է, որ անդամ երկրները «դիտարկեն զոհերի ֆիզիկական, հոգեբանական ու սոցիալական վերականգնման միջոցների ապահովումը»<sup>43</sup>: Մյուս կողմից Եև կոնվենցիան պարտավորեցնում է օրենսդիր մարմիններին ընդունել այնպիսի դրույթներ, որոնք նպաստում են այս կարգի վերականգնողական միջոցառումներին՝ անհրաժեշտության դեպքում ներառելով բնակության վայր, բուժօգնության ապահովում, թարգմանչական ծառայություններ, խորհրդատվություն, իրավունքների ներկայացում ու պարզաբանում ու կրթություն երեխաների համար<sup>44</sup>: Կոնվենցիայի մեկ այլ դրույթով էլ նախատեսվում է 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամկետ ենթադրյալ զոհերի համար, որի ընթացքում նրանց չեն կարող հարկադրաբար վտարել՝ թույլ տալով, որ նրանք ընդունեն իրազեկ որոշում վերականգնման և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ<sup>45</sup>: Եվ ի վերջո, կոնվենցիան նախատեսում է, որ զոհերը իրենց վնասների համար փոխհատուցում ստանան թրաֆիքինգ իրականացնողներից ու սոցիալական աջակցություն, որը նրանց թույլ կտա պաշտպանության ու տեղափոխման ժամանակահատվածում ապահովել միջոցներ նրանց համար<sup>46</sup>:

<sup>39</sup> Պալերմոյի արձանագրության 6-րդ հոդվածի 5-րդ մաս:

<sup>40</sup> Եև կոնվենցիայի 28-րդ հոդված:

<sup>41</sup> Նույն տեղում, հոդված 28.4:

<sup>42</sup> Նույն տեղում, հոդված 28.5:

<sup>43</sup> Պալերմոյի արձանագրության 6-րդ հոդվածի 3-րդ մաս:

<sup>44</sup> Եև կոնվենցիայի 12-րդ հոդված:

<sup>45</sup> Նույն տեղում, 13-րդ հոդված:

<sup>46</sup> Նույն տեղում, 15-րդ հոդված:

**ՀՀ օրենսդրություն**

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը թրաֆիքինգի զոհերի համար դեռևս չի նախատեսում մի շարք համապարփակ պաշտպանիչ միջոցառումներ, որոնք կբավարարեն ԵՆ կոնվենցիայի պահանջները: Այդ իսկ պատճառով հարկավոր է մի շարք փոփոխություններ կատարել, եթե Հայաստանը զանկանում է վավերացնել կոնվենցիան: Վերջին տարիների ընթացքում այս ոլորտում փոփոխություններ կատարելու վերաբերյալ մի շարք առաջարկություններ են եղել, սակայն այդ փոփոխությունների ընթացքը պարզ չէ և փոփոխությունների վերջին տարբերակը նույնիսկ վերացնում է կոնվենցիայով պահանջվող աջակցության կարևոր միջոցառումներ: Այս բաժնում քննարկվում է Հայաստանի օրենքը ինչպես այն ներկայացված է այժմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ինչպիսին այն կարող է դառնալ փոփոխություններ կատարելուց հետո:

Գոյություն ունեցող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներից, ինչպես նաև փոփոխությունների նախագծից պարզ չէ, թե՞ պաշտպանությունը ընդհանրապես տարածվում է միայն ցուցմունք տվող վկաների վրա, թե՞ յուրաքանչյուր անձնավորության վրա, որ պարզապես տիրապետում է այնպիսի տեղեկությունների, որոնք կարող են վտանգի տակ դնել նրա անվտանգությունը:

Երկրորդ՝ անձնական տվյալների գաղտնիության ոլորտում Հայաստանի օրենքը արդեն իսկ պարունակում է որոշակի պաշտպանիչ միջոցառումներ, որոնք նախատեսված են դատական վարույթի ժամանակ թաքցնելու թրաֆիքինգի զոհի անձնական տվյալները: Սակայն պաշտպանությանը խանգարում է այն փաստը, որ օրենքը պահանջում է, որ պաշտոնական նախագուշացում տրվի վկային բնությանը սպառնացող անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին:<sup>47</sup> Այս պահանջը չի ծառայում տուժողների անձնական տվյալների պաշտպանությանը և իհարկե տեղեկացնում է հավանական կազմակերպիչներին իրենց դեմ եղած բողոքի առկայության և բնույթի մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքում փոփոխություններ կատարելու նախագիծը վերացրել է նախագուշացնելու պահանջը՝ առաջարկվող դրույթը մոտեցնելով ԵՆ կոնվենցիայի պահանջներին:<sup>48</sup>

Հարկ է նշել, որ Հայաստանը չի ստորագրել կամ վավերացրել «Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան, որի հիման վրա է «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայում պաշտպանվում անձնական տվյալների գաղտնիությունը: Թեպետ նախորդ համաձայնագրի վավերացումը պարտադիր չէ դրան մասնակցելու համար, այնուամենայնիվ կարիք կլինի որոշակի փոփոխություններ կատարել Հայաստանի օրենսգրքում (կամ առաջարկված փոփոխություններում)՝ վերահսկողության ավելի բարձր մակարդակ ապահովելու համար, ինչը պահանջվում է «Անձնական տվյալների մասին» կոնվենցիայով: Այդ փոփոխությունները պետք է կապված լինեն պահպանման ենթակա անձնական տվյալների տեսակների, դրանց մշակման ժամանակ կիրառվող պաշտպանիչ միջոցների և տվյալների սուբյեկտի կողմից որոշակի պայմաններում դրանց հետ ծանոթանալու երաշխիքների հետ:<sup>49</sup>

<sup>47</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդված:

<sup>48</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծի 98-99-րդ հոդվածներ:

<sup>49</sup> Տե՛ս՝ «Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա, 28 հունվարի 1981թ., CETS 108, 5-8-րդ հոդվածներ:

Երրորդ՝ զոհերի ֆիզիկական պաշտպանությանը առնչվող խմբի առումով ինչպես Հայաստանի օրենքը, այնպես էլ փոփոխությունների նախագիծը պարունակում են թրաֆիքինգի զոհերին պաշտպանելու առանձին դրույթներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն առաջարկում է օգտվել անձնական պահպանության, պաշտպանվող անձի կողմից օգտագործվող բնակարանը կամ գույքը պահպանելու, նրան ժամանակավորապես ապահով վայր տեղափոխելու միջոցներից:<sup>50</sup> Փոփոխության նախագիծն էլ ավելի հեռուն է գնում՝ գրեթե մոտենալով ԵՍ կոնվենցիայի պահանջներին, որ նախատեսում է անձնական պաշտպանության միջոցների, հետևելու և հեռախոսային խոսակցությունների լսման, անձը հաստատող նոր փաստաթղթեր տրամադրելու և արտաքինը փոխելու, բնակության և աշխատանքի վայրը փոխելու հնարավորություններ:<sup>51</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այս տարբերակը սահմանափակվում է միայն քրեական վարույթին մասնակցողի հետ ներգրավված տուժողների, վկաների պաշտպանությամբ և չի տարածվում քրեական վարույթի հետ առնչվող այլ անձանց վրա:

Վերջին՝ զոհերի աջակցության կամ օժանդակության ոլորտում ՀՀ օրենսդրությունը չի առաջարկում վերականգնողական լայն միջոցառումներ, որոնք նախատեսված են ԵՍ կոնվենցիայում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ներկայիս տարբերակը տուժողներին չի առաջարկում որևէ օգնություն, բացի պաշտպանիչ միջոցառումներից՝ ապահով բնակավայր կամ տրանսպորտ՝ տեղափոխման ընթացքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որոշակի մասերում նշվում է, որ տուժողն իրավունք ունի՝ ծանոթանալու վարույթի բնույթի և համակարգի կողմից ապահովվող իրավունքների հետ և քրեական վարույթի ընթացքում, հարկ եղած դեպքում, պետք է ապահովվի թարգմանիչների մասնակցությունը<sup>52</sup> :

Հետաքրքիր է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը զգալի կերպով չի ընդլայնում աջակցության կամ օժանդակության միջոցառումների շրջանակը: Փոփոխությունների նախագծում նախատեսված չէ որևէ միջոցառում՝ կապված բուժօգնության, խորհրդատվության կամ երեխաների կրթման հետ, ոչինչ նախատեսված չէ նաև դատարանի դահլիճից դուրս թարգմանչական ծառայությունների կամ իրավական գործընթացը տուժողի համար բացատրելու աջակցության տրամադրման միջոցառումների առնչությամբ: Իհարկե ավելի համապարփակ օժանդակությանը վերաբերող դրույթներ եղել են փոփոխությունների նախկին տարբերակներում, սակայն ավելի թարմ տարբերակներում դրանք հանվել են. օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու 2004թ. դեկտեմբերի տարբերակում նախատեսվում էր տեղափոխման գործընթացի ժամանակ զոհերին փոխհատոցում տալ նվազագույն աշխատավարձի չափով, սակայն 2005թ. օգոստոսին կատարված փոփոխությունների արդյունքում այդ պահանջը հանվել է:<sup>53</sup> Իհարկե պարզ չէ, թե այդ լրացուցիչ միջոցառումները հանդիսանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորման առարկան, թե ոչ, սակայն կարծես թե օրենսդրական այլ միջոցներով դրանք նախատեսված չեն:

<sup>50</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ մաս:

<sup>51</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծի 98-րդ հոդվածի 3-րդ մասից 99-րդ հոդվածներ:

<sup>52</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված:

<sup>53</sup> Տես՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ պատրաստված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու 2004թ. դեկտեմբերի նախագիծը և ՀՀ արդարադատության նախարարության կողմից պատրաստված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու 2005թ. օգոստոսի նախագիծը:

**Ամփոփում. Չոհերի պաշտպանության ու նրանց ցուցաբերվող աջակցության հետ կապված հիմնահարցեր**

- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ներկայումս պահանջում է, որ պաշտոնական նախազգուշացում տրվի վկային սպառնացող անձին. դրույթը նվազեցնում է վկայի անվտանգությունը և անձի գաղտնիությունը:
- Հայաստանը չի ստորագրել «Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անհատ անձանց պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան և դեռևս չունի պաշտպանության համապարփակ միջոցներ՝ կապված տուժողի և վկայի վերաբերյալ ստացված և պահված անձնական տվյալների տեսակների և քանակության հետ:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ներկայիս տարբերակը սահմանափակվում է միայն քրեական վարույթում ներգրավված տուժողների և վկաների և նրանց մերձավոր ազգականների պաշտպանությամբ, սակայն չի պաշտպանում դատական վարույթին մասնակցող այլ անձանց: 2005թ. օգոստոսի փոփոխությունները այս բացթողումը չեն շտկում:
- Հայաստանի օրենքը չունի զոհերին աջակցելու նշանակալի միջոցառումներ, որոնք նախատեսված են թեթևացնելու թրաֆիքինգի անհատական և հասարակական ազդեցությունները, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքի փոփոխությունների ավելի վերջին տարբերակները վերացնում են նախկին տարբերակներով նախատեսված փոխհատուցման միջոցառումները:

**Ընդդատությունը և միջազգային համագործակցությունը**

***Միջազգային գործիքներ***

Հաճախ թրաֆիկինգով զբաղվողները օգտվում են ազգային ընդդատության սահմանափակումներից կամ որոշ երկրներում թրաֆիքինգին վերաբերող օրենքների ավելի մեղմ կիրարկումից: Թրաֆիկինգի կազմակերպիչները հաճախ օգտվում են տեղի օրենսդրության սահմանափակումներից կամ էլ որոշ երկրներում թրաֆիքինգին վերաբերող օրենքների մեղմ կիրարկումից: Հետևաբար, կարևոր է, որ հիմնվեն իրավական մեխանիզմներ՝ արտասահմանում կատարված թրաֆիքինգի հանցավոր արարքների վրա ընդդատությունը տարածելու և օրենքի կիրարկման ոլորտում միջազգային համագործակցություն ամրապնդելու համար: ԵՄ կոնվենցիան օրենսդրության վերաբերյալ պարունակում է մի շատ կարևոր դրույթ, որով պահանջում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկի այնպիսի օրենսդրական միջոցներ, որոնք անհրաժեշտ են կոնվենցիայում նախատեսված ցանկացած հանցավոր արարքի վրա իր ընդդատությունը տարածելու համար, եթե այն կատարվել է ա) իր երկրի տարածքում, բ) իր դրոշի ներքո նավարկող նավի վրա, գ) պետության դրոշը կրող փոխադրամիջոցի վրա, զ) իր օրենսդրությանը համապատասխան գրանցված օդանավում, դ) իր քաղաքացու կողմից, եթե այդ արարքը քրեորեն պատժելի է համարվում այն պետության քրեական օրենսդրության համաձայն, որտեղ կատարվել է, կամ եթե այն կատարվել է որևէ պետության տարածքային ընդդատությունից դուրս կամ ե) իր քաղաքացու նկատմամբ:<sup>54</sup> Բերված վերջին երկու դրույթները, որ ընդդատությունը տարածում է պետության տարածքներից դուրս՝ հենվելով քաղաքացիության սկզբունքի և տուժողի քաղաքացիության սկզբունքի վրա, որոնք անսովոր են միջազգային պայամանագրերի համար և նախատեսված են մարդկանց թրաֆիքինգի անդրազգային հետևանքները թեթևացնելու համար: Կոնվենցիան թույլ է տալիս

<sup>54</sup> ԵՄ կոնվենցիայի 31-րդ հոդված:

մասնակիցներին վերապահում կատարել «դ» և «ե» կետերի մասով (որը պայմանագրով թույլատրվող միակ վերապահումն է), սակայն ոչ «ա», «բ» կամ «գ» կետերի մասով:<sup>55</sup>

Ինչպես Պալերմոյի արձանագրությունը, այնպես էլ ԵՍ կոնվենցիան պահանջում են մասնակից պետություններից, որոնց քաղաքացի են հանդիսանում թրաֆիքինգի գոհերը օժանդակել նրա վերադարձին առանց անհարկի ձգձգումների: Նախընտրելի է, որ վերադարձը լինի կամավոր:<sup>56</sup> Քանի որ հայրենադարձությունը ծագման երկիր ակնհայտորեն կարող է տուժողին ենթարկել նոր ռիսկի, հետևաբար, պայմանագրերը պահանջում են, որ հայրենադարձությունը կատարվի «հաշվի առնելով տուժողի իրավունքները, անվտանգությունն ու արժանապատվությունը»:<sup>57</sup> Վերջապես, ԵՍ կոնվենցիան նաև պահանջում է, որ կողմերը մշակեն կրկնակի գոհականացումը կանխելուն ուղղված հայրենադարձության ծրագրեր, որոնք ներառում են նաև հայրենադարձված գոհերին աջակցող կազմակերպությունների կամ կառույցների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

### ՀՀ օրենսդրություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում արդեն իսկ նախատեսված է ՀՀ տարածքում կատարված հանցավոր արարքների տարածքային ընդդատությունը և պակաս հստակությամբ ՀՀ քաղաքացիների կողմից արտասահմանում կատարված հանցավոր արարքների համար քաղաքացիության սկզբունքով ընդդատությունը:<sup>58</sup> Չարմանալի չէ, որ ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվության է ենթարկում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ՀՀ քաղաքացիների դեմ կատարված միայն «ծանր» կամ «առանձնապես ծանր» հանցագործությունների համար:<sup>59</sup> Թեպետ ծանրացնող հանգամանքներում թրաֆիքինգի որոշ դրսևորումներ ՀՀ քրեական օրենսգրքով կարող են համարվել ծանր հանցագործություններ, այնուամենայնիվ հանցավոր արարքի ստանդարտ դրսևորումը՝ ոչ և այդ պատճառով արտատարածքային օրենսդրություն գոյություն չունի: ԵՍ կոնվենցիան վավերացնելուց հետո Հայաստանը կամ պետք է մշակի նման օրենսդրություն թրաֆիքինգի վերաբերյալ կամ ետ կանգնի կոնվենցիայի 31-րդ հոդվածի «ե» կետից: Սակայն թրաֆիքինգի դրույթների փոփոխումը՝ սահմանելով ավելի ծանր պատժամիջոցներ (տես՝ «Ընդհանուր միջոցառումներ» վերնագրի «ՀՀ օրենսդրություն» ենթավերնագիրը) առանձնապես դժվարություն չի ներկայացնում, որի արդյունքում սակայն թրաֆիքինգը մեխանիկորեն կդառնար ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն և, հետևաբար, արտատարածքային պահանջ կառաջանար:

Վերջապես, ՀՀ օրենսդրությունը ոչ մի դրույթ չունի անդրազգային հանցագործություններից (ինչպիսին թրաֆիքինգն է) տուժածների հայրենադարձման

<sup>55</sup> ԵՍ կոնվենցիայի 45-րդ հոդված:

<sup>56</sup> Տես՝ Պալերմոյի արձանագրության 8-րդ հոդված, CoE Convention, Art. 16.

<sup>57</sup> ԵՍ կոնվենցիայի 16-րդ հոդված:

<sup>58</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-50-րդ հոդված:

<sup>59</sup> ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մաս. Ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Առանձնապես ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: Թրաֆիքինգը դասակարգվում է որպես ավելի մեղմ «միջին ծանրության» հանցագործություն, որոնք համարվում են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարվա ազատազրկումը, ինչպես նաև անզոյություն կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:

մասով: Չնայած հանցագործների հանձնման բավականաչափ լավ մշակված ընթացակարգերին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լռում է հայրենադարձման ընթացակարգերի վերաբերյալ, որը կարող է նշանակել, որ թրաֆիքինգի զոհերը կարող են հանդիպել անհարկի խոչընդոտների՝ Հայաստանից իրենց ծագման երկիր վերադառնալիս (օրինակ՝ եթե նրանց ձերբակալում են Հայաստանի տարածքում տրանզիտով գտնվելու ժամանակ): Պաշտոնական հայրենադարձման դրույթների բացակայությունը կարող է նաև նշանակել, որ թրաֆիքինգի ցանկացած զոհ, Հայաստանից իր ծննդավայր արտաքսվելու դեպքում, կարող է տեղ հասնելու ժամանակ նրանց կանգնեցնել դատական կարգով հետապնդման կամ կրկնակի զոհականացման վտանգի առջև:

#### **Ամփոփում. ՀՀ օրենսդրության մեջ ընդդատության և միջազգային համագործակցության դրույթների հետ կապված հիմնահարցեր**

- ՀՀ քրեական օրենսդրությամբ ընդդատությունը չի տարածվում Հայաստանի տարածքից դուրս ՀՀ քաղաքացիների դեմ կատարված թրաֆիքինգի հանցավոր արարքների վրա, որը հզոր գործիք կհանդիսանար թրաֆիքինգի կազմակերպիչներին դատական կարգով հետապնդելու համար:
- ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են հայրենադարձման միջոցառումները, որը խոչընդոտում է միջազգային համագործակցությանը և մեծացնում է թրաֆիքինգի զոհերի համար կրկնակի զոհականացման հավանականությունը:

**Հավելված. Հայաստանում մարդկանց թրաֆիքինգին առնչվող սահմանումներ և դրույթներ**

**Հոդված 3, Միավորված Ազգերի՝ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, կանխման և պատժի մասին» արձանագրությունը; հոդված 4. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան.**

«Մարդկանց թրաֆիքինգ» է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու նդանակով: Ծահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարագոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը»:

**ՀՀ քրեական օրենսգիրք, 132 հոդված (ընդունված 2003 թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է 2003 թ. օգոստոսի 1-ից)**

1. Մարմնավաճառության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարագոր վիճակի կամ կախյալ վիճակի հասցնելու, ինչպես նաև մարդու օրգանները վերցնելու նպատակով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, առևանգելու, խարդախության, այլ խաբեության, իշխանությունը չարաշահելու կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ մեկ այլ անձնավորության վերահսկող անձի համաձայնությունն ստանալու նպատակով՝ վճարման կամ շահ ստանալու տեսքով կաշառելու միջոցով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 3) անչափահասի նկատմամբ,
- 4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

- 1) կատարվել են կազմակերպված խմբի կողմից,



2) անզգուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:

**ՀՀ քրեական օրենսգիրք, 132 հոդված (2004 թ. հունիսի 9-ի փոփոխություններից և լրացումներից հետո, այսինքն՝ ներկա տարբերակը)**

1. Մարդկանց առևտուրը, այսինքն՝ մարդուն գնելը կամ վաճառելը, հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է նրան պոռնկության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարազոր վիճակի հասցնելու կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 3) անչափահասի նկատմամբ,
- 4) երկու կամ ավելի անձանց կամ հաշմանդամի նկատմամբ՝
- 5) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 6) տուժողի՝ պետական սահմանն ապօրինաբար հատնլն ապահովելով կամ նրան ապօրինի օտարերկրյա պետությունում պահելով,
- 7) տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

- 1) կատարվել են կազմակերպված խմբի կողմից,
  - 2) անզգուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝
- պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:

**Հոդված 168. ՀՀ քրեական օրենսգիրք (գործող)**

Երեխայի առք ու վաճառքը պատժվում է երեքից յոթ տարի ժամկետով:

**Հոդված 261. ՀՀ քրեական օրենսգիրք, (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է 2003 թ. օգոստոսի 1-ից)**

1. Պռոնկությանը զբաղվելուն ներգրավելը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, անձի կախյալ վիճակն օգտագործելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ դա հափշտակելու սպառնալիքի կամ անձին կամ նրա մերձավորին անվանարկող տնդեկություններ տարածելու սպառնալիքի կամ խաբեության ճանապարհով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) անչափահասի նկատմամբ,

2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

**Հոդված 261. ՀՀ քրեական օրենսգիրք, (2004թ. հունիսի 9-ի փոփոխություններից հետո, այսինքն՝ ներկա տաբերակը)**

1. Պռոնկությանը զբաղվելուն ներգրավելը կամ պռոնկությանը զբաղվելը շարունակելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

1) բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) տուժողի՝ պետական սահմանն ապօրինաբար հատելն ապահովելով կամ նրան ապօրինի օտարերկրյա պետությունում պահելով,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են կազմակերպված խմբի կողմից կամ անչափահասի նկատմամբ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:«:

**Հոդված 262. ՀՀ քրեական օրենսգիրք, (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է 2003 թ. օգոստոսի 1-ից)**

Պոռնկությամբ զբաղվելու համար որջեր կազմակերպելը, պահելը կամ կավատությունը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

**Հոդված 262. ՀՀ քրեական օրենսգիրք, (2004թ. հունիսի 9-ի փոփոխություններից և լրացումներից հետո, այսինքն՝ ներկա տաբերակը)**

1. Կազմակերպչական գործողությունները՝ ուղղված այլ անձանց կողմից պոռնկությամբ զբաղվելուն, կամ պոռնկությամբ զբաղվելու համար որջեր պահելը կամ պոռնկությամբ զբաղվելու համար պարբերաբար շինություններ տրամադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Նույն գործողությունները, որոնք կատարվել են ակնհայտ անչափահասին օգտագործելով՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից տասը տարի ժամկետով: